

ՎԱՆԻ ԵՕԹ ՔԱՀԱՆԱՆԵՐՈՒ ԴԻՄՈՒՄԸ
ՖՐԱՆՍԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԱՆ
ՔԱՂԱՔԻ ՓՈՒՑ ՔՈՆՍՈՒԼԻՆ
ՔԱՂՈՒԱԾ ՖՐԱՆՍԱՅԻ ՆԱՆԹ ՔԱՂԱՔԻ
ՊԵՏԱԿԱՆ ԴԻԻԱՆՆԵՐԷՆ

ARCHIVES DIPLOMATIQUES DE NANTES (CADN)

ARCHIVES DES POSTES
AFFAIRES ÉTRANGÈRES
AMBASSADE TURQUIE
CARTON 73
AFFAIRES ARMÉNIENNES
1907
120

MINISTÈRE DES AFFAIRES ÉTRANGÈRES
CONSTANTINOPLÉ
AFFAIRES ARMÉNIENNES
1906-1913

À Son Excellence

Monsieur le vice-consul de la République française à Van

C'est depuis six siècles que l'invasion de la race turque a eu lieu en Asie-Mineure et elle a resté toujours dans le caractère destructeur d'une invasion.

Les guerres, le tremblement de terre, l'ouragan, la sauterelle et tout autre fléau pareil ne sont que pour quelque temps; ils passent, et c'est la période de restauration qui succède; au contraire, les pays envahis par les

ottomans continuent à rester dans l'état de ruine du début du fléau; non seulement la restauration n'a pas eu lieu, mais encore la ruine et la destruction ne cessent pas de continuer. Examinez l'histoire des six dernières siècles de ce pays, parcourez les pays sous la domination turque et vous y verrez les débris de plusieurs villes jadis florissantes et prospères, les villages anéantis, et des contrées désertes. Vous y verrez d'immenses ruines des établissements publics, des monastères, des chemins, des ponts, des cimetières etc. monuments de la civilisation ancienne; sous la domination turque, ou plutôt, par l'entreprise directe des Turcs, aucun travail, aucune construction, aucun progrès culturel; si, par hasard, vous rencontrez édifice monumental en quelque établissement public, Vous pouvez être bien sûr qu'ils ne sont que les restes de la civilisation ancienne ou les produits de l'entreprise des peuples chrétiens ou, enfin, les travaux des entrepreneurs étrangers, réalisées par des permissions acquises avec mille sortes de difficultés.

Depuis un siècle les peuples chrétiens, gémissants sous le joug du despotisme turc, ont élevé de cri de secours, ils ont sollicité l'assistance de l'Europe Chrétien, du monde civilisé, ou bien ils se sont révoltés et ont peint de leur sang des pays entiers. Aussi, c'est depuis un siècle, à partir l'ère du soulèvement de la Grèce, que la question séculaire des réformes en Turquie ou plutôt de l'affranchissement des chrétiens d'Orient pèse-t-elle sur la conscience de l'Europe et le gouvernement turc s'est obligé de céder de temps en temps à la pression du monde civilisé, de la des promesses ou des engagements des réformes par des lois ou des contrats solennels, tel que Hatte-Cherif de Gulhané, les contrats de Paris et de Berlin ou bien des commissions de réformes ont été envoyées parfois sans le prétexte de réaliser les réformes. Mais, hélas! Tous ces moyens n'en servi que d'exister davantage la haine des Turcs contre les chrétiens et de produire la politique monstrueuse de massacres, productions inclusives de l'esprit turc.

Les nations balkaniques, plus proche de l'Europe, ont pu, depuis un siècle, grâce à l'assistance du monde civilisé et aux facilités des relations et des armements, rompre le joug de la domination turque et faire, durant les 30 ans derniers, un progrès gigantesque de sorte que Elles réussissent même à délivrer leurs confrères lesquels, une fois libres, pourront s'avancer sans obstacles dans le chenal de la civilisation. Les Arméniens seuls continuent à rester enchaînés dans le même esclavage et, ce qui est plus pire encore, le joug de barbarisme turc pèsera encore plus lourd sur eux comme sur un bouc d'expiation. Si le monde civilisé, com-

me protecteur traditionnel des chrétiens de l'Orient, ne se précipitent pas à les défendre contre le despotisme.

La nation arménienne, presque la seule nation chrétienne dans toute l'Asie, destinée à être le précurseur de la civilisation occidentale, a été depuis 600 ans diminuée sous la domination de l'Empire ottoman, par des massacres généraux de sorte que maintenant en Turquie 1 ½ million à peine restent de 8-10 millions de son nombre de passé. Après la dernière guerre orientale les Arméniens aussi ont eu la hardiesse de mettre devant l'Aréopage européen la question de leur existence, mais cette hardiesse excita davantage la cruauté turque et la vengeance folle de Sultan Abd-ul-Hamid.

C'est pourquoi un simple question de réforme de l'article 61 me du traité de Berlin a coûté la vie de 300,000 Arméniens, massacre inouï, organisé par l'ordre du gouvernement turc dans le but infernal d'enterrer la question de réforme à l'anéantissement même de la nation arménienne, un acte accompli devant les yeux du monde civilisé et qui fera le plus grand déshonneur historique d'un siècle illuminé.

Nous ne mentionnons pas les suites des massacres, les orphelinats et les veuves innombrables, dont une partie traînèrent leurs existences lamentables avec les subsides des bienfaiteurs européens, les pillages généreux, les incendies, les convertissements forcés, les rapt, les emprisonnements, les pendements, les exils, les immigrations, les empiètements de terre etc. etc.

Nous ne mentionnons pas les troupes des Hamidiés, ces enfants gâtés du gouvernement turc, armés et jetés sur le pays surtout sur les Arméniens, comme des brigands organisés officiellement et des assassins récompensés par des décorations, des dignités et des appointements.

Il y allait eu un temps, où les Arméniens ainsi que les étrangers, même plusieurs diplomates ont eu la crédulité de penser que tous ces malheurs ne provenait que du cerveau malade d'Abd-ul-Hamid, et que, le changement du sultan et de son régime aurait changé le sort du pays; aussi le monde diplomatique ainsi que les Arméniens ont en confiance sur le régime constitutionnel des Jeunes-Turcs, de sorte que les Arméniens, oubliant le passé sanglant, se sont attachés de tous leurs cœur à la constitution, se sont fraternisés avec leurs bourreaux, se changèrent des baisers avec eux etc., hélas! Cette attachement innocent des Arméniens leurs a coûté la vie de 30,000 nouveaux martyrs à Adana, exécutés directement de la part des Jeunes-Turcs, encore une fois des pillages, rapt et incendies, de nouveau plusieurs corps innocents balancèrent sur des

gibets à Adana, comme des preuves brillantes de la justice des Jeunes-Turcs.

Après les massacres à Adana, les jeunes Turcs ont continué encore la politique d'extermination contre les Arméniens; aussi non seulement, malgré l'insistance fréquente du Patriarcat arménien et les fausses promesses du gouvernement, n'a-t-on pas à restitué les terrains aux Arméniens qui, encouragés par la proclamation de la constitution retournaient de l'étranger à leur patrie, mais encore on ne cessa pas de produire en Arménie des massacres systématiques, au nombre de 1, 3, 5, 10 etc.; pendant les six mois derniers dans le vilayet de Van plus de 60 personnes ont été tuées, comme vous avez vu vous-même; en outre les Jeunes-Turcs, suivant un programme de panislamisme et se trouvant toujours dans une attitude d'inimitié contre les autres éléments du pays, surtout contre les chrétiens, ont bien montré qu'ils ne suivent que la politique d'Abd-ul-Hamid, ce qui a occasionné une désillusion parfaite dans le pays et en Europe et a abouti aux soulèvements arabe et albanais et à la fin des fins à la guerre actuelle des Balkans.

Enfin l'histoire des six derniers siècles ainsi que la vie de ces quatre ans de constitution ont montrés évidemment, que, la race turque par des causes différentes venues de sa religion et de son sang n'a pas l'aptitude au progrès et à la civilisation; qu'elle garde encore son caractère de barbarisme; que sa manière de penser reste toujours la même; que le turc est toujours intransigeant et intolérant contre les autres peuples du pays et bien fanatique contre les chrétiens. C'est pourquoi; comme désormais c'est inutile de mettre l'espoir sur les promesses de réformes;

Comme le gouvernement turc, non seulement ne peut, mais encore, ne veut pas faire des réformes réelles et assurer la vie, l'honneur et les biens des Arméniens, ce qui a été depuis des siècles aussi qu'il est maintenant, notre unique demande raisonnable et élémentaire;

Comme la question orientale va être mise dans les mots d'ordre en Europe et le sort des peuples orientaux sera décidé;

Comme l'Europe s'est chargée de la garantie, il y a 35 ans par le 61^{me} article du Traité de Berlin, de la défense de la vie, de l'horreur et des biens des Arméniens contre les kurdes et les Sirkassiens, garantie qui, restée jusqu'à présent irréalisée a été une cause de grandes massacres.

Nous avons l'honneur de vous payer monsieur le consul, au nom de toute la nation arménienne martyrisée depuis des siècles, au nom de la

civilisation du XXe siècle, d'avoir la bonté d'être l'intermédiaire pour faire arriver notre prière au monde civilisé et à la justice et à la conscience de la grande République Française, de ne pas ajouter foi désormais à aucune promesse et à aucun engagement de la Turquie, de ne pas donner cas à la commission qu'elle vient de former, comme pour faire des réformes en Arménie, commission qui ne vaut rien et qui n'a d'autre but que de tromper de nouveau l'opinion publique de l'Europe, et enterrer la question arménienne.

Nous prions l'Europe d'établir en Arménie, sous son contrôle réel une administration organisée et équitable et la sécurité de vie, d'honneur et de biens, d'après les principes de justice et d'égalité.

Vos très humbles serviteurs
Van le 11/24 Décembre 1912

ՆԱԿԱԹԻ ԴԻԻԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԻԻԱՆ

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ
ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ ԴԻԻԱՆ
ԹՈՒՐԳԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ
1907
120

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ
1906-1913

*Նորին վսեմութիւն,
Ֆրանսական Հանրապետութեան
Վանի փոխ-հիւպատոսութեան,*

Վեց դարէ ի վեր է որ թիւրք ցեղի արշաւանքը Փոքր Ասիոյ եւ Հայաստանի վրայ կատարուած է եւ անիկա միշտ ալ մնացած է արշաւանք, քանդող եւ աւերող պայմաններու մէջ: Ոեւէ աղէտ, ինչպէս պատերազմներ, երկրաշարժ, ուրական, մարախ եւ այլն առժամանակեայ կը լինեն, որոնց անցնելէն յետոյ աւերումը կը դադրի եւ կը սկսի վերաշինութեան շրջանը, բայց ատոր հակառակ Օսմանեան տիրապետութեան աշխարհակալած երկիրները շարունակած են մնալ աղէտի սկզբնաւորութեան քանդումի շրջանին մէջ, ոչ միայն վերաշինութիւն կատարուած չէ, այլ քանդումի գործը շարունակուած է ցայսօր: Բրբրեցէք

այս երկրի վեց դարու պատմութիւնը, շրջեցէք թիւրք տիրապետութեան սահմաններու մէջ եւ պիտի տեսնէք շէն քաղաքները կործանուած, գիւղերը չքացած եւ ամբողջ երկրամասերը որոնք երբեմն ծաղկած էին՝ վերածուած անապատի: Այդ երկրի մէջ պիտի տեսնէք ընդարձակ աւերակներ, հանրային հաստատութիւններու, վանքերու, ճամբաներու, կամուրջներու, գերեզմանոցներու եւ այլն, որոնք ապացոյցներն են անոր նախկին հայկական քաղաքակրթութեան. իսկ թիւրք իշխանութեան ներքեւ կամ թիւրք նախաձեռնութեամբ ոչ մի շինարար ձեռնարկ եւ աշխատանք չէ կատարուած. ոչ մէկ կուլտուրական յառաջդիմութիւն չէ եղած եւ եթէ տեսնէք ո եւ է հոյակապ շինութիւն, մի հանրային ձեռնարկ, անոնք կամ երկրի նախկին քաղաքակրթութեան բեկորներ են կամ երկրի բնիկ քրիստոնեայ ժողովուրդներու նախաձեռնութեան արգասիք եւ կամ պարզապէս օտար ձեռնարկուներու միջոցաւ կատարուած գործեր, որոնք առաջ եկած են մեծ դժուարութիւններով ստացուած արտօնութիւններով:

Մէկ դարէ ի վեր թիւրք բռնապետութեան գերութեան ներքեւ հեծող քրիստոնեայ ժողովուրդներն ուղղակի ձայներ բարձրացուցած եւ քրիստոնեայ Եւրոպայի քաղաքակիրթ Աշխարհի օգնութիւնը աղերսած են, կամ ըմբոստութեան դրօշները բարձրացուցած եւ ամբողջ երկիրները իրենց արիւնովը ներկած են. այս պատճառով մէկ դար է, այն է յունական ապստամբութեան թուականէն ի վեր, Եւրոպայի ու քաղաքակիրթ Աշխարհի խղճի վրայ ծանրացած է թիւրքիոյ քրիստոնէից ազատութեան կամ թիւրքիոյ բարենորոգումներու վաղեմի հարցը. ուստի թիւրք իշխանութիւնները ժամանակ առ ժամանակ տեղի տալ պարտաւորուած են Եւրոպայի ճշուամին՝ որով առաջ եկած են հանդիսաւոր օրէնսդրութիւններով կամ դաշնադրութիւններով բարենորոգմանց խոստումները եւ յանձնառութիւնները, ինչպէս են Գիւլհանէի օրէնսդրութիւնը, Բարիզի եւ Պեռլինի դաշնագիրները, կամ մերթ ընդ մերթ բարենորոգմանց յանձնաժողովներ ճամբայ հանուած են բարենորոգումներ գործադրել տալու պատրուակաւ, բայց ատոնք ամէն պատճառ եղած են թիւրքերու ցատումը եւս աւելի հրաւիրելու իր քրիստոնեայ ժողովուրդներու վրայ եւ առաջ բերելու ջնջումի հրէշային քաղաքականութիւն մը հսկայ ջարդերու միջոցաւ, զոր թիւրք միտք մը միայն կրնայ յղանալ:

Եւրոպային մօտիկ գտնուող Պալզանեան ազգերը քաղաքակիրթ Աշխարհի օժանդակութեամբ եւ իրենց յարաբերութեանց եւ սպառազինութեանց, դիւրութիւններով մէկ դարէ ի վեր կարող եղան հետզհետէ թօթափել թրքական գերութեան լուծը եւ 30 տարիներէ ի վեր հսկայական յառաջդիմութիւններ ընել քաղաքակիրթութեան եւ կուլտուրայի մէջ. այնպէս որ այսօր կը յաջողին իրենց համարիւն եղբայրներու ազատութիւնն ալ ձեռք բերել, որոնք այսուհետեւ գերութեան դարաւոր շղթաները թօթափած առաջ պիտի երթան քաղաքակիրթութեան ճամբուն մէջ. ուստի, հայերը միայն կը մնան նոյն գերութեան շղթաներու մէջ եւ որոնց վրայ այսուհետեւ եւս աւելի պիտի ծանրանայ թիւրք բարբարոսութեան լուծը իբրեւ նոխազ քաւութեան, եթէ քաղաքակիրթ Եւրոպան իբրեւ պաշտպան Արեւելքի քրիստոնէից չպաշտպանեն զայն ընդ դէմ բռնաւորի:

Հայերը իբրեւ Ասիոյ գրեթէ միակ քրիստոնէայ ժողովուրդը, որոնք Արեւելքին մէջ Արեւմտեան քաղաքակիրթութեան յառաջապահները լինելու սահմանուած էին, վեց հարիւր տարիներէ ի վեր, թրքական գերութեան ներքեւ միշտ կոտորակուելով հսկայ ջարդերու միջոցաւ այս օր հազիւ թէ մէկ ու կէս միլիոնի թիւ մը կը կազմեն թիւրքիոյ մէջ իրենց նախորդ 8-10 միլիոն թուոյն հանդէպ: Վերջին Արեւելեան պատերազմէն յետոյ անոնք ալ համարձակութիւն ունեցան իրենց գոյութեան հարցը եւրոպական արիսպագոսեան օրակարգին վրայ դնելու. բայց ստիկա աւելի գրգռեց թիւրք բռնապետութիւնը եւ Ապտիւլ Համիտի խելագար վրէժխնդրութիւնը, ուստի պարզ բարենորոգմանց հարց մը, Պերլինի դաշնադրութեան 61-րդ յօդուած մը արժեց 300,000 հայերու կոտորած, կազմուած թիւրք կառավարութեան հրամանաւ հայ ազգի ջնջումովը, հայկական բարենորոգումներու հարցը թաղելու դժոխային նպատակով. բան մը որ կատարուեցաւ քաղաքակիրթ աշխարհի աչքին առաջ եւ որ լուսաւորեալ դարու մը պատմական արատներէն ամենամեծը պիտի մնայ: Չենք յիշեր ջարդերու հետեւանօք առաջ եկած անթիւ որբերը ու այրիները, որոնցմէ մաս մը մարդասէրներու նպաստներով իրենց ողբալի գոյութիւնը քաշքշեցին համատարած թալաններ, հրկիզումներ, բռնի կրօնափոխութիւններ, առեւանգութիւններ, բանտարկութիւն, կախաղան, աքսոր, գաղթականութիւնները, հոդերու յափշտակութիւն եւ այլն: Չենք յիշեր Համիտիէ Քիւրտ

յելուզակներու վոճմակը զոր թիւրք կառավարութիւնը զինեց եւ արձակեց երկրի եւ մանաւանդ Հայ ազգին վրայ, կազմելով այսպէս համատարած աւազակութիւն մը պաշտօնական հանգամանքի տակ եւ ոճրագործ աւազակները բարձրացնելով զօրապետութեան, փաշայութեան եւ այլն, աստիճաններու, վարձատրուած եւ քաջալերուած ռոճիկներով եւ պատուանշաններով:

Մի ժամանակ ինչպէս Հայ ժողովուրդը նոյնպէս ալ օտարազգիներն նոյնիսկ դիւանագիտական աշխարհի մէջ դիւրահաւանութիւն ունեցան կարծելու որ այս բոլոր աղէտները կը բըղխէին Ապտիւլ Համիտի հիւանդ մտքէն եւ թէ ոչժիմի փոփոխում մը եւ սուլթանի մը փոփոխութիւնը պիտի բարեփոխէին երկրին բախտը. ուստի ինչպէս դիւանագիտական աշխարհը Հայ ազգին ալ հաւատք եւ վստահութիւն ունեցաւ ժէօն-թիւրք տարրի սահմանադրական ոչժիմին վրայ, այնպէս որ հայերը մոռնալով արիւնոտ անցեալը՝ սրտովին յարեցան Սահմանադրութեան, իրենց դահիճներու հետ եղբայրակցեցան... բայց աւա՛ղ, հայերու սոյն անմեղ յարումը սահմանադրութեանը 30,000 նոր կեանքեր արժեց Ատանայի մէջ, կոտորուած ուղղակի ժէօն-թիւրքերու ձեռամբ. դարձեալ թալաններ, հրկիզումներ, առեւանգումներ, դարձեալ որբանոցներ եւ այրիացածներ եւ դարձեալ նոյնիսկ կախաղաններ որոնց վրայ անմեղ հայերու մարմինները ճօճեցին Ատանայի մէջ, իբրեւ փայլուն ապացոյց ժէօն-թիւրքերու արդարութեան:

Ատանայէն յետոյ ալ ժէօն-թիւրքեր շարունակող եղան համիտական հայաջինջ քաղաքականութեան ոչ միայն սահմանադրութեան վրայ յոյս դնելով վերադարձող Հայ գաղթականներու հողերը չվերադարձուեցան իրենց, հակառակ ազգային Պատրիարքարանի թախանձանքներուն եւ տրուած բազմաթիւ խաբուսիկ խոստումներու. այլ շարունակուեցան Հայաստանի մէջ սիստեմատիկ ջարդեր մէկով, հինգով, տասնով, վերջին վեց ամսուան մէջ միայն Վասպուրականի մէջ 60է աւելի հայեր ջարդուեցան այն եղանակով ինչպէս լսեցիք անշուշտ. շարունակուեցան առեւանգութիւններ, թալան եւ այլն, իսկ ամէնէն յետոյ ժէօն-թիւրքեր համիսլամութեան ծրագիր մըն ալ մշակելով եւ մանաւանդ քրիստոնէից հանդէպ թշնամական ընթացք բռնելով, ցոյց տուին որ իրենք եւս կատարեալ հետեւողներ են Սուլթան Համիտի արտառոց քաղաքականութեան եւ որ առաջ բերաւ սահ-

մանադրույթեան վրայ կատարեալ հիասթափութիւն թէ երկրի եւ թէ Եւրոպայի մէջ եւ որոնք հետեւանք եղան Արաբական, եւ Ալ-պանական ապստամբութիւններ եւ հուսկ ապա ներկայ Պալգանեան պատերազմ:

Վերջապէս Վսեմափայլ Տէր, թէ վեց դարու պատմութիւնը եւ թէ վերջին չորս տարուան սահմանադրական կեանքը բաց է բաց ցոյց տուին որ թիւրք ցեղը կրօնական եւ ազգային զանազան ազդակներու պատճառաւ յառաջդիմելու եւ քաղաքակրթութելու անընդունակ է, որ անիկա կը պահէ դեռ իւր բարբարոս նկարագիրը, որ թիւրք մտայնութիւնը կը մնայ անփոփոխ եւ թիւրք ցեղը աններող հանդէպ միւս տարրերուն եւ Ֆրանսիական հանդէպ քրիստոնեայ ազգութիւններու: Ուստի նկատելով որ բարենորոգմանց վրայ յոյս դնելը այլեւս անօգուտ է, որ թիւրք կառավարութիւնը ոչ միայն անկարող է եւ անընդունակ այլեւ անփափաքող է երկիրը բարեկարգելու եւ ապահովելու: Հայոց կենաց, պատուոյ եւ ընչից ապահովութիւնը որ դարերէ ի վեր հայ ժողովրդեան միակ բանաւոր եւ տարրական պահանջն եղած է եւ է:

Նկատելով որ ի մօտոյ Արեւելեան հարցը նորէն Եւրոպայի օրակարգի վրայ պիտի դրուի եւ վճռուի՝ անոր ժողովուրդներու բախտը:

Նկատելով որ 35 տարի առաջ Եւրոպան 61-րդ յօդուածով յանձնառու եղած եւ երաշխաւորուած է ապահովել հայերը քիւրտերու եւ չերքէզներու բռնութեանց դէմ, յանձնառութիւն մը՝ որ ոչ միայն ցարդ անգործադրելի մնացած այլ մասայական հսկայ ջարդերու առիթ եղած է, ուստի Վասպուրականի թշուառ եւ տառապեալ ժողովուրդը կը խնդրէ Ձերդ Վսեմութեան որ բարեհաճիք ներկայ յիշատակները մատուցանել Ձեզ մեծագոր հարապետութեան յանուն դարաւոր տառապեալ հայ ժողովրդեան, յանուն հայ հարիւր հազարաւոր անմեղ նահատակներուն, յանուն XX-րդ լուսաւորեալ դարու քաղաքակրթութեան խնդրել որ՝ հաւատք չընծայեն այլեւ թրքական խոստումներուն եւ անոր դաշնադրական զանազան խոստումներուն, որոնք բան մը չեն արժեր. հաւատք չընծայեն վերջի ատեններս ալ, նախորդներու նման թիւրք կառավարութեան կազմած կամ կազմել մտադրած բարենորոգմանց յանձնաժողովին որ եղած է Եւրոպան կըրկին խաբելու եւ հայկական հարցը կրկին թաղելու նպատակաւ,

այլ եւրոպական քօնթրօլի ներքեւ հաստատեն Հայաստանի մէջ բարեկարգ եւ արդար վարչութիւն մը, արդարութեան եւ հաւասարութեան սկզբունքի համաձայն ապահովելու հայ կեանքի, գոյքի եւ պատուոյ անձեռնմխելիութիւնը:

Ձեր խորին ծառաներ,
Վան, 11/24 Դեկտեմբեր 1912

(ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ)	{	Ներսէս Քահանայ Տէր Բարսեղեան Թովհաննէս Քահանայ Տէր Մանուէլեան Խ. Քահանայ Տէր Յարութիւնեան Մեսրոպ Քահանայ Ճանիկեան Զ. Քահանայ Ժամազործեան Արմաւիր Քահանայ Աճէմեան Գարեգին Քահանայ Տէր Գէորգեան
-----------------	---	---

Հ. ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՕՀԱՆԵԱՆ